

## UnionPay International քարտային համակարգ

N	Դաշտի անվանումը	Նկարագրություն
1	Համակարգի անվանումը	UnionPay International
2	Պաշտոնական կայքը	<a href="https://www.unionpayintl.com">https://www.unionpayintl.com</a>
3	Համակարգի օպերատորի անվանումը, գրանցման հասցեն, երկիրը	UnionPay International Co., LTD (Floor 2-7, No. 6 Dongfang Road, Pudong New District, Shanghai, PRC, Չինաստան)
4	Համակարգի գործունեության թույլտվության/լիցենզիայի/ գրանցման առկայությունը	Լիցենզիա N00000000201510150092
5	Համակարգում պրոցեսինգ իրականացնող կազմակերպության անվանումը, գրանցման, հասցեն, երկիրը	<p>ՀՀ մասնակցի համար՝ «Արմենիան Քարդ» ՓԲԸ (Մ.Խորենացի 15, «Էլիտ Պլազա» բիզնես կենտրոն, 0010, Երևան, Հայաստան),</p> <p>Համակարգում ընդհանուր՝ «UnionPay International Co., Ltd» (Floor 2-7, No. 6 Dongfang Road, Pudong New District, Shanghai, PRC)</p>
6	Համակարգում քլիրինգ իրականացնող կազմակերպության անվանումը, գրանցման հասցեն, երկիրը	UnionPay International Co., LTD (Floor 2-7, No. 6 Dongfang Road, Pudong New District, Shanghai, PRC)
7	Համակարգում վերջնահաշվարկ իրականացնող կազմակերպության անվանումը, գրանցման, հասցեն, երկիրը	Կենտրոնացված վերջնահաշվարկի գործակալ առկա չէ
8	Համակարգի հետ ինտեգրված/հարակից համակարգերի անվանումները	Առկա չեն
9	Համակարգի շրջանակներում ՀՀ ԿԲ կողմից գնահատված ծառայությունների տեսակը/տեսակները	վճարային քարտերի սպասարկման ծառայություն՝ ԱԳՄ-ներով կանխիկ և ՊՈՍ տերմինալներով անկանխիկ եղանակով
10	Համակարգում մասնակիցների միջև կիրառվող վերջնահաշվարկի կատարման սկզբունքները	Համակարգում վերջնահաշվարկն իրականացվում է հաշվարկային բանկում բացված մասնակցի ԱՄՆ դոլարով թղթակցային հաշվի միջոցով, օրական պարբերականությամբ, զուտ սկզբունքով

11	<p><b>Համապատասխանությունը ՀՀ օրենսդրությանը</b></p>	<p>Ներկայացված անդամակցության պայամանագրի նախագիծը, Համակարգի կանոնները (<b>ընդունված 06/2019թ.</b>) եւ այլ փաստաթղթերը չեն հակասում ՀՀ օրենսդրությանը:</p> <p>Ներկայացված փաստաթղթերում ապահովված են.</p> <ul style="list-style-type: none"> <li>• ԿԲ խորհրդի 2014թ.-ի սեպտեմբերի 23-ի թիվ 250-Ն որոշմամբ հաստատված Կանոնակարգ 19-ի պահանջները;</li> <li>• ՀՀ ԿԲ խորհրդի 2006թ.-ի հուլիսի 4-ի թիվ 342 Ն որոշմամբ հաստատված Արտասահմանյան վճարահաշվարկային համակարգում մասնակցության հետևանքով Հայաստանի Հանրապետության ֆինանսական համակարգի կայունությունը և (կամ) իրացվելիությունը և (կամ) վճարունակությունը վտանգելու մասին ուղեցույցի պահանջները:</li> </ul>
12	<p><b>Համակարգում կիրառվող տեխնիկածրագրային, հեռահաղորդակցման միջավայրը</b></p>	<p>Համակարգում կիրառվող հեռահաղորդակցման ու կապի միջոցները, կիրառվող տեխնիկածրագրային միջավայրը, էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության դրույթները, ռիսկերի կառավարման մեխանիզմները, ինչպես նաև Համակարգի գործունեության անընդհատության ապահովման սկզբունքները գնահատվել են բավարար:</p>